23 JUN 2008

Շ. ՄԵՐԱՆԳՈՒԼՅԱՆ

Մանկական ֆուտբոլ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

080.1
Մ-88

ՊԵՏՀՐԱՏ • 1935

36ԱԱ
2976
087.1
Մ-66

ՄԱՆԿԱԿԱՆ ՖՈՒՏԲՈԼ

Կազմեց Շ. ՄԵՐԱՆԳՈՒԼՅԱՆ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՊԵՏՀՐԱՏ. 1935 ԵՐԵՎԱՆ

28 JUN 2013

Գատ. խմբ. Մ. Մարինոսյան
Լեզվ. խմբ. Հ. Պետրոսյան
Տեխ. խմբ. Տ. Խաչվանքյան
Սրբագրիչ՝ Հ. Դոլուխանյան

Գլավլիտ 253, Պատվեր 892
Հրատ. 3356, տիրաժ 1000
Պետհրատի տպարան, II Գնուշկի, 4

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
Ա. Մեսրոպի անվան
им. А. Мясниняна

60495.67

ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է ՍԿՍԵԼ ՖՈՒՏԲՈԼԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՄԱՆԿԱԿԱՆ ՖԿ ԽՄԲԱԿՆԵՐՈՒՄ

Յերեխաների սպորտի առանձին ձևերով պարապելու լուրջ խնդիրը վաղուց չէ, որ դրական լուծում է ստացել մեր Միությունում։

Մինչև վերջերս առանձին մասնագետներ արտահայտել են այն տեսակետը, որ սպորտը յերեխաներին ճնաս է, որ նա յերեխայի օրգանիզմի նորմալ զարգացումը դանդաղեցնում է և այլն։ Անշուշտ այս խոսքերի մեջ կային վորոշ ճշմարտություններ,—յերեխայի օրգանիզմը պետք է հոգատարության արժանանա սպորտի առանձին ձևերում ընդգրկելիս։ Մանկական օրգանիզմի ֆիզիկական ատիճանական զարգացման խնդիրներում մեզ մեծ չափով ոժանդակեց և ՊԱՊ-ի կոմպլեքսը։ ՅԵՊԱՊ-ի սիստեմի հիմնադրումը դպրոցական ու պիոներական ֆիզկուլտ աշխատանքների մեջ՝ վերջ դրեց այդ «գիտական» տեսակետներին և ստեղծեց յերեխաների համար սպորտով պարապելու խորհրդային հարազատ սիստեմը։

ՅԵՊԱՊ-ի կոմպլեքսը հանդիսանում է խորհրդային ֆիզկուլտուրայի սկզբնական քայլը, վորի ճիշտ հիմնադրումն ապահովում է ապագա սպորտսմենի սիստեմատիկ կատարելագործումը։ Յերեխան մեծ ցանկություն ունի պարապելու սպորտով. այս վերջին

հանգամանքն է, վոր պետք է ոգտագործել պիոներների և դպրոցականների այդ ցանկությանը կազմակերպված ձևով ընթացքը տալու համար։

Վերոհիշյալ աշխատանքներում խոշոր անելիք ունեն մեր կազմակերպության հին մասնագետները, վորոնք իրենց հարուստ փորձը պետք է տան սպորտի ապագա վարպետներին՝ բուրժուական բոլոր ռեկորդներին հասնելու և անցնելու համար։



Նոր Բութանյայի մանկական ֆուտբոլի թիմը

Ֆուտբոլը յեղած սպորտ խաղերից ամենաբարդ ձևն է՝ խաղի տեխնիկայի բարդության, կոմբինացիաների հմտության և ֆիզիոլոգիական ծանրության տեսակետից. այդ պետք է համարել հիմնական պատճառը, վոր պիոներներին և դպրոցականներին ֆուտբոլով զբաղեցնելու խնդիրը յերկար ժամանակ վիճաբանության առարկա յեր դարձել։

Անշուշտ ֆուտբոլը պիոներների և դպրոցականների ֆիզիկական ունակությունները զարգացնող լավագույն սպորտ խաղը պետք է համարել, վորը յերեխային ֆիզիկական բազմակողմանի զարգացում է տալիս, այն է՝ դիմացկունություն, ճարպկություն, հմտություն, համարձակություն, կոլեկտիվ կյանքի սովորություններ և նմանորինակ մի շարք ունակություններ, վորոնցով ոժտված պետք է լինի սոցիալիզմի մեծ գործի ղեկավարներին փոխարինող ապագա քաղաքացին։

Նոր սկսնակ մանուկ ֆուտբոլիստին հենց սկզբից պետք է տալ նրան մատչելի ֆուտբոլի մեթոդիկան՝ հիշելով, վոր մանուկ հասակում շատ անգամ ավելի հեշտ է ճիշտ ուսուցանել, քան հետագայում այդ սովորություն դարձած սխալն ուղղել։

1. Դպրոցական ինքնագործ ՖԿ խմբակի բյուրոն պետք է իրենց խմբակում ցուցակագրի այն պիոներներին ու դպրոցականներին, վորոնք ցանկություն ունեն այդ խաղով զբաղվելու. ցուցակագրությունը պետք է կատարվի ըստ տարիքային առանձնահատկությունների։

2. Ցուցակագրվածներին պետք է յենթարկել ամենամանրամասն բժշկական քննության և այդ պետք է կրկնել վոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ։

3. Նրանց պետք է ընդգրկել ՑԵՊԱՊ-ի նորմանե-

բում և հետագայում պարապել այդ նորմաները տալու համար։

4. Ֆկ ինքնագործ խմբակի դասատուն կամ ղեկավարը հատուկ ուշադրություն պետք է դարձնի այդ ձևով պարապողների ընդհանուր ֆիզիկական ունակությունների զարգացման վրա։

5. Ֆիզկուլտուրայի տեղական խորհրդից պետք է խնդրել և այդ աշխատանքները ղեկավարելու համար խմբակին կցել ֆուտբոլի լավագույն մարզողներից նրան, ով ավելի ծանոթ է յերեխաների հոգեբանությանը և, վոր կարևորն է, սիրում է յերեխաների հետ պարապել։

6. Այդ խաղի գործնական ձևին անցնելու համար, անպայման պետք է ունենալ ֆուտբոլի կոշիկներ, գետրիներ (զանկապաններ), պաշտպանիչներ, տրուսիկ ու մայկա։

7. Անհրաժեշտ է հատուկ բացատրական աշխատանք տանել և սովորեցնել ֆուտբոլի տարազը, կոշիկները, պաշտպանիչները հագնելու ձևը և պարապմունքներին միշտ պահանջել, վոր այդ նրբությունները պահպանվեն։

Անհրաժեշտ է, վոր ուսուցման վարժությունները ընթանան սիստեմատիկորեն ամբողջ տարվա տևողությամբ՝ տարվա վորոշ սեզոններին փոխելով նրանց ընույթը և հարմարեցնելով այդ սեզոնին. ուրիշ խոսքով՝ պարապմունքների կորագծի մեջ մտցնել անհրաժեշտ փոփոխություն, որինակ՝ ձմեռն այդ սեկցիան պարապում է ՑԵՊԱՊ-ի ձմեռային նորմաներով, դահուկով, չմուշկով, ժարմնամարզությամբ, վորոնք նպաստում են պարապողի որգանիզմը միշտ մարզված

գրության մեջ մնալուն (սիրտը, թոքերը, վոտքերի ուժը, աչքաչափը և այլն)։ Գարնանը, ամռանը և աշնանը պարապում են թեթև ատլետիկայով, լողով, նախապատրաստական խաղերով։ Մարզվելու վորակի խնդիրը բոլոր ղեկավարների համար առաջնակարգ խնդիր պետք է հանդիսանա՝ հիշելով, վոր յերեխայի որգանիզմը նուրբ է և յենթակա յե շուտ փոփոխման, ուրեմն սխալ կորագծով անցկացվող պարապմունքները կարող են ուղղակի աղդել նրանց ֆիզկուլտ նորմալ զարգացման վրա։ Այդ պարապմունքների կորագծի մեջ, բացի ֆուտբոլից, հարկավոր է մտցնել ֆիզկուլտուրայի նորմալ դասի մասերը, վորոնք նպաստում են այդ խաղն ավելի հեշտ սովորելուն։ Այդ աշխատանքը նպատակահարմար ձևով կազմակերպելու համար ցանկալի յե այդ ուսուցումը բաժանել յերեք մասի։

1. Ընդհանուր ֆիզկուլտ պատրաստականություն ՑԵՊԱՊ-ի ժարմնամարզական և թեթև ատլետիկայի նորմաներից ուսումնասիրել վազքի ճիշտ ձևերը, ցնցումները, քայլի չափերը և հատկապես գործի դնել միանների այն խումբը, վորոնք հարկավոր են ֆուտբոլի համար։ Այս մասում խաղի տեխնիկայի ելեմենտների մասին նույնպես պետք է հասկացողություն տալ։

2. Բացատրել խաղի տակտիկան, մոմենտների կատարելագործումը, ֆուտբոլի խաղի պաշտոնական կանոնները, սրանց նշանակությունը, առանձին խաղացողների նշանակությունը, խաղի ընդհանուր նպատակը։ Այս աշխատանքը նախաձեռնելիս յուրաքանչյուր սխալի վրա պետք է խաղը կանգնեցնել և բացատրել ճիշտ մոմենտը։

3. Բացատրել խաղի տակտիկայի ընդհանուր հաս-

կացողությունը, պարզաբանել առանձին խաղացողների խաղի տեխնիկան։ Բացատրել խաղի առանձին կոմբինացիաների (համակցության) նշանակությունը, խաղացողներին ամրացնել իրենց մշտական տեղերին։ Այս աշխատանքները վերջացնելուց հետո կազմակերպել ընկերական հանդիպումներ։

Ընկերական մրցումներն անցկացնելու ժամանակ անպայման պետք է ուշադրություն դարձնել խաղացողների տարիքի վրա։ Մեծերի հետ յերբեք չպետք է խաղալ։ Մրցումներն անպայման պետք է կազմակերպել այնպիսի դաշտերում, վորտեղ դաշտի չափերը համապատասխանում են մանկական ֆուտբոլի պաշտոնական կանոններին։

ԽԱՂԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ց. Դ. Ցուցումները դասատուներին։

Ց. Կ. Ցուցումները կազմակերպություններին։

Սրանք հանդիսանում են պաշտոնական կանոնների բովանդակությունը և պարտադիր են կատարելու համար։

1. ԴԱՇՏԻ ՉԱՓԵՐԸ

Ֆուտբոլի խաղադաշտը ներկայացնում է մի ուղղանկյուն՝ 90 մ. յերկարությամբ և 50 մ. լայնությամբ։

Ց. Դ. Դասավորը չպետք է թույլատրի խաղալ յեթե գտնում է, վոր դաշտի գետնի վիճակը վտանգավոր է խաղացողների համար։

Ց. Կ. Դաշտի մակերևույթը պետք է հարթ լինի և ըստ հնարավորության՝ կանաչով ծածկված։

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել, վոր անկյունային հարվածը կատարելու համար ուժ առնելու (գու քաշելու) տեղ լինի։

2. ԴԱՇՏԻ ԳԾԱԳՐՈՒՄԸ

Դաշտն ամբողջովին պետք է սահմանափակված լինի գծերով։ կարճ գծերը կոչվում են հանդիպագծեր, իսկ յերկարները՝ կողքի գծեր։ Հանդիպագծերը և կողքի գծերը պետք է կազմեն ուղղանկյունները։ Ամեն մի անկյան գագաթում պետք է տնկել փոքրիկ դրոշակ, վորի փայտը պետք է հողից բարձր լինի 1 մ. 50 սմ-ից վոչ պակաս, և ծայրը բութ պետք է լինի։ Ամեն

Նկ. №2. Յերևանի, Նոր Բութանիայի և Նարդոսի անվան դպրոցի ֆուտբոլի մանկական թիմերն ընդմիջման ժամանակ։

մի անկյան գագաթից 1 մետր շառավղով գծվում է աղեղ՝ մինչև դիմագծերի և կողքի գծերի հետ հատվելը. անկյունային հարվածը կատարվում է այդ սեկտորից։ Կողքի գծերի կենտրոնները մատնացույց են ուղիղ գծով, որը կոչվում է «Միջին գիծ»։

«Միջին գծի» կենտրոնը ներկայացնում է դաշտի կենտրոնը, որը պետք է պարզ գծել. դաշտի կենտրոնից գծվում է մեկ հատ շրջան՝ 9 մետր շառավղով։ Հանդիպագծերը պետք է անցնեն դարպասի միջով. դաշտում գտնվող բոլոր գծերը պետք է ունենան 5-10 սմ լայնություն և պետք է գտնվեն դաշտի մակերևույթի հետ մեկ հարթության վրա։ Գծերն ակոսներով նշանակելն արգելվում է։ Ամեն մի գիծ, որը նշում է այս կամ այն հրապարակը, մտնում է նույն հրապարակի չափի մեջ։

8. Դ. Դատավորը չպետք է թույլատրի խաղալ չբծված դաշտում։ Դատավորը չպետք է թույլատրի, որ դաշտի վրա 4 դրոշակից ավելի լինի։ Դատավորը չպետք է թույլատրի անկյունային հարվածը կատարելու ժամանակ անկյունային դրոշակը հանել կամ ծռել։

8. Կ. Դաշտը պետք է գծագրել դաշտի գույնից տարբեր գույնով, ցանկալի է կավճով, թեփով, ավազով, բայց ոչ մի դեպքում փայտի կավարներով (рейка-ձող) կամ քարերով։ Բոլոր տեսակի կողմնակի առարկաները պետք է հեռացվեն հանդիպագծերից չորս մետր և կողքի գծերից՝ յերկու մետր տարածությամբ։

3. ԴԱՐՊԱՍՆԵՐ

Հանդիպագծի վրա անկյուններից հավասար հեռավորության վրա դրվում են դարպասներ, որոնք բաղկացած են յերկու ուղղահայաց փայտերից, որոնք դրվում են մեկը մյուսից 6 մ. հեռավորության վրա, և մեկ հորիզոնական փայտից, որը միացնում է այդ ուղղանկյունների ծայրերը և գտնվում է գետնից 2 մ 3 սմ. բարձրության վրա։ Դարպասի փայտերը պետք է ունենան 12. սմ լայնություն և հաստություն։ Դեմքի գծի այն մասը, որն անցնում է դարպասի միջով, կոչվում է «Դարպասի գիծ»։

8. Կ. Դարպասները պետք է ներկվեն պարզ գույնով և ունենան թելացանց, որն ամրացվում է գետնին 1 մ 50 սմ հեռավորության վրա։ Ցանցն ամրացնելու համար առաջին փայտերին զուգահեռ՝ հետևից նոր փայտեր խփել արգելվում է։

4. ԴԱՐՊԱՍԱՊԱՀԻ ՀՐԱՊԱՐԱԿԸ

Դարպասի փայտերից, նրա յերկու կողմը 5մ 50 սմ հեռավորության վրա գծվում է յերկու գիծ՝ հանդիպագծին ուղղահայաց, յուրաքանչյուր 5 մ 50 սմ յերկարությամբ։ Այդ գծերի ծայրերը միացվում են մի ուղիղ գծով, որը զուգահեռական է հանդիպագծին։ Այսպիսով կազմված ուղղանկյունը կոչվում է «Դարպասապահի հրապարակ»։

5. ՏՈՒԳԱՆՔԻ ՀՐԱՊԱՐԱԿ

Նույն ձևով դարպասների փայտերից 16 մ 50 սմ հեռավորության վրա գծվում է յերկու ուրիշ գիծ՝ ամեն մեկը 16 մ 50 սմ յերկարությամբ. սրանց ծայ-

քերը միացվում են ուղիղ գծով. ստացված ուղղանկյունը կոչվում է «Տուգանքի հրապարակ»։ Տուգանքի հրապարակում դարպասից, մեջտեղից 11 մ հեռավորության վրա, նշան է տրվում, որտեղից կատարվում է 11 մետրանոց հարվածը։

6. ԳՆԴԱԿ

Գնդակը պետք է լինի կլոր և խաղից առաջ պետք է ունենա 60-65 սմ յերկարությամբ շրջագիծ։ Գնդակի քաշը խաղից առաջ պետք է լինի 325-350 գ։ Գնդակի դրսի շապիկը պետք է պատրաստված լինի կաշվից։

8. Դ. Խաղից առաջ դատավորը պետք է ստուգի՝ համապատասխանում է գնդակը խաղի կանոններին, թե վոչ։

8. Կ. Գնդակը տրամադրում է այն թիմը, որը տվյալ դաշտի տերն է հանդիսանում։

Խաղի համար պետք է ունենալ պահեստի պատրաստի գնդակ։

7. ԽԱՂԱՑՈՂՆԵՐԻ ԿՈՇԻԿՆԵՐԸ

Խաղացողների կոշիկները չպետք է ունենան դուրս ընկած մետաղյա վորևե մաս, թեկուզ այդ կաշվով պատած լինի։ Կաշվին խփած մեխերի գլուխները կաշվի մակերեսին հավասար պիտի լինեն։ Պադոշի տակը յեղած բութակները (aco) պետք է լինեն կաշվից, կլոր կամ տափակ, 1-25 սմ-ից վոչ բարձր և վոչ ել սրածայր։ Բութակների համար արգելվում է ոգտագործել ամուր գուտապերչ կամ մետաղ, թույլատրվում է գործածել փափուկ ռեզին և չինել կեսագնդաձև բութակներ՝ վոտքի տակի համար։ Ամեն մի խաղացող, վորի կոշիկները չեն համապատասխանում խաղի կանոններին, հեռացվում է դաշտից՝ կոշիկները փոխելու համար։

8. Կ. Չպետք է մոռանալ, վոր բութակներն աստիճանաբար մաշվում են, իսկ մեխերը դուրս են ցցվում։

8. ԽԱՂԱՑՈՂՆԵՐԸ

Խաղին մասնակցում են յերկու թիմ՝ ամեն մեկը 11 հոգուց բաղկացած։

Խաղի սկզբից ամեն մի թիմ կարող է բաղկացած լինել 10 հոգուց, սակայն խաղի ընթացքում թիմի անդամների թիվը 10-ից քիչ լինելու դեպքում, խաղը դադարեցվում է։

Յեթե խաղի ընթացքում դժբախտ պատահարի պատճառով խաղացողը դուրս է գալիս դաշտից, և այդ դեպքը հաստատվում է բժշկի կամ դատավորի կողմից, ապա այդ խաղացողը կարող է փոխարինվել մեկ ուրիշով։ Փոխարինող խաղացողների թիվը յերեք հոգուց ավելի չպետք է լինի՝ ամեն մի թիմի համար։ Խաղի սկզբից բացակայող 11-րդ խաղացողը կարող է մտնել խաղի մեջ այն ժամանակ, յերբ գնդակը դուրս է յելել խաղից, կամ ընդմիջումին։ Յերկու դեպքում ել խաղացողը պետք է հայտնի դատավորին։ Յեթե խաղացողը ցանկանում է դուրս գալ խաղից, նա պարտավոր է նախորոք ստանալ դատավորի թույլատվությունը։ Տույժի կարգով դաշտից հեռացված խաղացողը չի կարող փոխարինվել մեկ ուրիշով։

8. Դ. Դատավորը կարող է մերժել խաղացողի

դաշտից դուրս գալու խնդրանքը, յեթե նա համոզված է, վոր այդ անհրաժեշտ չէ։

9. ԴԱՐՊԱՍՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Խաղի սկզբին դատավորը վիճակ է գցում՝ դարպասների ընտրության և սկզբնական հարվածի իրավունք տալու համար։

3. Դ. Դատավորը պետք է հիշի, թե վոր թիմն է կատարել սկզբնական հարվածը։

10. ԽԱՂԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

12-13-14 տարեկանների համար պաշտոնական խաղը տևում է 40 րոպե, իսկ 15-16-17 տարեկանների համար՝ 60 րոպե։

3. Դ. Յեթե խաղը մի վորևե պատճառով ընդհատվել է, դատավորն ընդհատված ժամանակն ավելացնում է այն կեսին, վորի ընթացքում տեղի յե ունեցել այդ ընդմիջումը։ Յեթե գնդակը նորմալ կերպով դուրս է գալիս խաղից, համաձայն ներքոհիշյալ կանոնների, այդ խաղի ընդհատում չի հաշվվում։ Խաղն ընդհատել թույլատրվում է դժբախտ պատահարների դեպքում, գնդակը փչանալու, հանդիսականների միջամտության և ընդհանրապես բոլոր այն դեպքերում, յերբ հարկավոր է վերացնել այն ժամանակավոր արգելքը, վորը խանգարում է խաղի նորմալ ընթացքը։ Յեթե դատավորն ավելացնում է ժամանակը (վորը կորել է ընդմիջումների պատճառով), ցանկալի յե, վոր նա այդ մասին տեղյակ պահի թիմերի ավագներին։

8. Կ. Դատավորի համար թիմերում պետք է ունենալ ճիշտ գործող ժամացույցներ։

Նորմալ խաղի համար սահմանված ժամանակից ավելի խաղալ՝ արգելվում է։ Յեթե այդ ժամանակամիջոցում խաղը վոչվոք չի տանում, խաղն անպայման պետք է վերջացնել և, յեթե անհրաժեշտ է, պարզել թիմերի առաջնության խնդիրը։ ապա կարելի յե նշանակել նոր հանդիպում 8 ժամից վոչ շուտ և անպայման լրիվ տևողությամբ։

11. ՀԱՆԳԻՍՏ ԸՆԴՍԻՋՈՒՄ ՅԵՎ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ

Խաղի ժամանակը բաժանվում է 4 քառորդի։ առաջին և յերկրորդ քառորդից հետո տրվում է հանգիստ՝ յերեք րոպե, իսկ 2-րդ քառորդից հետո, այսինքն խաղի կեսից հետո տրվում է 10 րոպե ընդմիջում և թիմերը փոխում են իրենց տեղերը։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—12, 13, 14 տարեկան յերեխաներին թույլատրվում է ունենալ միայն ընկերական հանդիպումներ, իսկ 15, 16 և 17 տարեկաններին թույլատրվում է ունենալ որացույցային մրցումներ։

12 ՍԿԶԲՆԱԿԱՆ ՀԱՐՎԱԾ

Խաղն սկսվում է դաշտի կենտրոնում, անշարժ դրությամբ մեջ գտնվող գնդակին հարվածելով։ Հարվածն ուղղվում է հակառակորդի հանդիպագծի ուղղությամբ։ Հակառակորդն իրավունք չունի գնդակին 9 մետրից ավելի մոտենալու՝ մինչև սկզբնական հարվածի կատարումը, և մինչև այդ վոչ մի խաղացող իրավունք չունի «միջին գիծն» անցնելու դեպի հակառակորդի դաշտը։

Սկզբնական հարված կատարողն իրավունք չունի

Մանկական գրքերի հրատարակչություն
ՊԵՏ. ԿԱՆ ԳՐ. ԴԱՐԱՆ
ГСС Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
ИНСТИТУТА
60495-67

յերկրորդ անգամ դիպչելու գնդակին, մինչև նրան մի ուրիշ խաղացող չդիպչի։ Գնդակը խաղի մեջ է համարվում, յեթե մի ամբողջ շրջան է անում իր շրջագծի յերկարությամբ, այսինքն՝ գլորվում կամ թռչում է 65 սմ։ Յեթե գնդակն անցնի դարբասն անմիջապես սկզբնական հարվածից, այդպիսի գնդակը դարբասն անցած չի հաշվվի։ Յեթե սկզբնական հարվածը չի կատարվել վերոհիշյալ կանոնի համաձայն, հարվածը պետք



Նկ. 3. Ինչպես դատավորվել խաղն սկսելուց առաջ։

է կրկնել։ Ամեն անգամ, յերբ գնդակն անցնում է

դարբասից, պարտված թիմն սկսում է խաղն սկզբնական հարվածով՝ համաձայն վերոհիշյալ կանոնի։

8. Դ. Դատավորը յուրաքանչյուր քառորդի տևողությունը հաշվում է տվյալ քառորդի՝ առաջին ճիշտ կատարած սկզբնական հարվածից հետո։ Անհրաժեշտ է նշել, որ այս կանոնը խախտելու դեպքում հակառակորդին իրավունք չի տրվում ազատ հարված կատարելու։ Յեթե կանոնը խախտված է դիտավորյալ կերպով, հանցավորին զգուշացում է արվում, և հարվածը կրկնվում է. յեթե նույն խաղացողը կանոնը կրկին խախտում է, նա հեռացվում է դաշտից։

8. Կ. Շատ խաղացողներ շրջան են մտնում կամ անցնում են «դաշտի միջին» գիծը՝ սուլիչից անմիջապես հետո։ Այդ սխալ է, քանի որ խաղն սկսվում է ոչ թե սուլիչով, այլ սկզբնական հարվածի կատարումով։

13. ԴԱՐՊԱՍԻ ԳՐԱՎՈՒՄԸ

Դարպասը վերջացած է համարվում, յեթե գնդակն ամբողջովին անցել է դարպասի միջին գիծը՝ դարբասի ուղղահայաց և հորիզոնական փայտերի միջով, յեթե միայն արձակող թիմի անդամների կողմից գնդակը ձեռքով չի նետված կամ խփված։ Խաղը տանում է այն թիմը, որն ըստ դատավորի դարպասն ավելի շատ գնդակներ է անցկացրել։

8. Դ. Դատավորը ոչ մի դեպքում գնդակը դարպասից անցած չպետք է համարի, յեթե այդ բանում համոզված չէ։ Զի թույլատրվում կողքի գծից գնդակն ուղիղ գցել դարպասը։ Պատահում է, որ դարպասապահը ձեռքով յուր է տանում գնդակն՝ առաջ նետելու նպա-

տակով, և փաստորեն գնդակը դարպասապահի ձեռքի հետ միասին անցնում է դարպասի «միջին գիծը»։ Այդ դեպքում դատավորը գնդակը դարպասն անցած պետք է հաշվի։ Պատահում է և այնպես, որ դարպասապահը գնդակը բռնում է՝ լինքը դանվելով դարպասի խորքում. պարզ է, որ գնդակն այս դեպքում նույնպես դարպասն անցել է։ Բանի որ դատավորը յերբեք չպետք է պահի սխալ գործողի կամ մեղավորի կողմը, ուստի նա գնդակն անցած պետք է համարի հետևյալ դեպքում, յեթե գնդակը դարպասից անցնում է այն ժամանակ, յերբ պաշտպանվող թիմի անդամներից որև է մեկը դիպչում է ձեռքով կամ կոպիտ է խաղում։ Տվյալ դեպքում պաշտպանվողներին ձեռնտու կլիներ տուգանքի հարված ստանալ։ Դատավորը պետք է շատ զգույշ լինի նման դեպքում, յեթե նա խորապես համոզված է, որ իր սուլիչը կոպիտ խաղի կամ ձեռքով խաղալու համար ստիպեց պաշտպանվողներին դադարեցնել պաշտպանությունը, ապա այս դեպքում նա գնդակը դարպասն անցած չպետք է հաշվի,—յեթե դատավորի կարծիքով իր սուլիչը չազդեց պաշտպանության վրա և չնայած կոպիտ խաղին կամ ձեռքով խաղալուն ու գնդակը յետ դարձնելու փորձին, գնդակն անցնում է դարպասից, այս դեպքում գնդակը դարպասն անցած պետք է հաշվել։ Դատավորը պետք է առավել ուշադիր լինի այն դեպքում, յերբ պայքարը գնդակի համար՝ դարպասի մոտ է տեղի ունենում։ Դատավորի վորոշումը դարպասն անցած գնդակների թվի վերաբերյալ—վերջնական է։

Յ. Կ. Դարպասի «միջին գիծը» պետք է նշանակ-

ված լինի շատ պարզ և դարպասի հորիզոնական փայտը՝ լավ ամրացված։

14. ԳՆԴԱԿԸ ԴՈՒՐՍ Է ԳԱԼԻՍ ԽԱՂԻՑ

Գնդակը դուրս է գալիս (հանվում է) խաղից, յեթե ամբողջովին անցնում է դիմագիծը կամ կողքի գիծը—ոդի միջով կամ գետնի վրայով։ Գնդակը մնում է խաղի մեջ, յեթե նա յետ է դառնում դաշտը կպչելով դարպասի փայտերին, կամ դրոշակների կոթին, նաև այն դեպքում, յերբ կպչում է դատավորին կամ գծի վրայի դատավորներին, յերբ նրանք գտնվում են դաշտի սահմաններում։

Յ. Դ. Յեթե գնդակը թռչում է գծից դուրս, բայց քամու ուժից յետ է տալիս, հաշվվում է խաղից դուրս յեկած։ Յեթե գնդակը դիպչում է դատավորին կամ գծի վրայի դատավորներին, հաշվվում է խաղի մեջ, թեկուզ առանց նրանց կպչելու էլ պետք է դաշտից դուրս գար։ Յեթե գնդակը դիպչում է դատավորին կամ գծի վրայի դատավորներին դաշտի սահմաններում և հետո դուրս է գալիս գծից, հաշվվում է խաղից դուրս յեկած այն խաղացողի կողմից, որը վերջինն է հարվածել նրան։

Յ. Կ. Դատավորին կպած և նրանից դարպաս անցած գնդակը հաշվվում է դարպասն անցած։

15. ԳՆԴԱԿԸ ՆԵՐՍ ԳՑԵԼԸ

Յեթե գնդակը կողքի գիծը կորելով դուրս է գալիս խաղից՝ ապա այն ներս է գցում գնդակը դուրս բերող թիմի հակառակորդներից որևէ մեկը։ Գնդակը դեպի դաշտը ներս են գցում այն տեղից, որտեղից դուրս

և հանվել։ Գնդակ գցողը պետք է կանգնի յերկու վոտքով գետնի վրա՝ կողքի գծից դուրս, յերեսը դեպի խաղադաշտը դարձրած, և յերկու ձեռքով գլխի հետևից գնդակը նետի։ Գնդակը կարելի յե ներս գցել ցանկացած ուղղությամբ, և համարվում է արդեն խաղի մեջ, հենց վոր բաժանվում է նետողի ձեռքերից և ոդի մեջ կտրում է կողքի գիծը։ Յեթե այսպես գցելով գնդակն անմիջապես անցնում է դարպասից, այս դեպքում այդ գնդակը դարպաս անցած չի հաշվվում, իսկ գնդակ գցողն իրավունք չունի յերկրորդ անգամ դիպչելու գնդակին, մինչև նրան չդիպչի մի ուրիշ խաղացող։ Այս կանոնը խախտելու դեպքում գնդակը խաղի մեջ գցելու իրավունքն անցնում է հակառակորդին։

8. Դ. Գնդակը ներս գցելու համար դատավորը չի սուլում, բայց նա պետք է հետևի, վոր գնդակը ճիշտ նետվի։ Կարող են լինել հետևյալ սխալները 1.—խաղացողը գնդակը ներս գցելիս չի կանգնած յեկու վոտքի վրա։ Խաղացողը գցում է գնդակը վոչ գլխի հետևից. գնդակը նետում է մեկ ձեռքով, իսկ մյուսով միայն բռնում է. գնդակը չի նետում, այլ միայն բաց է թողնում ձեռքից. խաղացողը կանգնած չե յերեսը դեպի դաշտը։ Գծի վրայի դատավորներն ամբողջ ժամանակ պետք է գտնվեն հնարավոր չափով գնդակին մոտ՝ չմտնելով խաղադաշտը. նրանց պետք է ցուցատան այն տեղը, վորտեղից գնդակը պետք է խաղի մեջ նետվի։

8. Կ. Խաղացողները գնդակը ներս գցելիս չպետք է սպասեն դատավորի սուլիչին։

16. ՀԱՐՎԱԾ ԴԱՐՊԱՍԻՑ

Յեթե գնդակը կտրելով հանդիպագիծը՝ դուրս է գալիս խաղից՝ հարձակվող թիմի խաղացողի կողմից, ապա նա խաղի մեջ է բերվում հակառակորդ թիմի խաղացողի միջոցով, դարպասից հարված հասցնելով, և այդ կատարվում է հետևյալ ձևով։ Գնդակը դրվում է դարպասի հրապարակի այն կետում, վորը մոտ է գնդակի՝ խաղից դուրս գալու տեղին. խաղացողն հարվածում է ցանկացած ուղղությամբ՝ դատավորի սուլիչից հետո, և իրավունք չունի յերկրորդ անգամ դիպչելու նրան՝ մինչև նրան չդիպչի մի ուրիշ խաղացող։ Դարպասից հասցրած հարվածից անմիջապես հետո գնդակը դարպաս անցած չի հաշվվում։ Հակառակորդ թիմի խաղացողները գնդակից 9 մ հեռու պետք է լինեն՝ մինչև հարվածի կատարումը։ Գնդակը հաշվվում է խաղի մեջ, յերբ նա թռչում է կամ գլորվում է գետնի վրայով 65սմ։

8. Դ. հարվածը կատարվում է դատավորի սուլիչից հետո։ Յեթե հարվածը կատարվել է մինչև սուլիչը, ապա այն կրկնվում է։ Դատավորը պետք է հետևի, վոր հարվածը կատարվի դարպասի հրապարակի համապատասխան տեղից։

8. Կ. Հակառակորդ թիմի խաղացողները հարվածը կատարելիս պետք է գտնվեն 9 մ տարածության վրա։

17. ԱՆԿՅՈՒՆԱՅԻՆ ՀԱՐՎԱԾ

Յեթե գնդակը, կտրելով հանդիպագիծը դուրս է գալիս խաղից՝ պաշտպանվող թիմի խաղացողի հարվածից, նա խաղի մեջ է բերվում հարձակվող թիմի խաղացողի կողմից անկյունային հարված կատարելու միջոցով.

իսկ այդ կատարվում է ստորև հիշված ձևով։ Գնդակը դրվում է սեկտորի ներսը՝ մի վորևե կետում։ Դատավորի սուլելուց հետո խաղացողը կատարում է հարվածը ցանկացած ուղղությամբ և յերկրորդ անգամ իրավունք չունի դիպչելու գնդակին՝ մինչև մի ուրիշ խաղացող չդիպչի նրան։ Անկյունային հարվածից անմիջապես դարպաս անցած գնդակը հաշվվում է։ Հակառակորդ թիմի խաղացողներն իրավունք չունեն գնդակին մոտենալու ավելի քան 9 մ, մինչև հարվածը կատարվի։ Գնդակը հաշվվում է խաղի մեջ, յերբ նա թռչում կամ գլորվում է 65 սմ։

3. Դ. Անկյունային հարվածը կատարվում է դատավորի սուլոցով։ Յեթե հարվածը կատարվել է մինչև սուլելը, անպայման կրկնվում է. դատավորը հետևում է, վոր անկյունային հարվածը կատարվի անկյունային սեկտորից և վոր գրոշակն անկյունից չընծրևի, չհանվի և չտեղափոխվի։

3. Կ. Անկյունային սեկտորները պետք է պարզ գծել։ Հակառակորդ թիմի անդամները մինչև հարվածը կատարելն իրավունք չունեն գնդակին մոտենալու ավելի քան 9 մ։

18. ՎԻՃԵԼԻ ՀԱՐՎԱԾ

Յեթե խաղը վորևե պատճառով ընդհատվել է, ըստ վորում գնդակը դուրս չի յելել վոչ կողքի գծերից և վոչ էլ հանդիպագծերից, այս դեպքում գնդակը խաղի մեջ է բերում դատավորը. այդ կատարվում է ստորև հիշված ձևով։ Դատավորը ձեռքը մեկնում է ուսին հավասար, գնդակը ձեռքին, և խփում է դաշտի այն կետին, վորտեղ խաղն ընդհատվել է։ Գնդակը հաշվվում է խաղի մեջ, յեթե դիպչում է դետնին։ Յեթե գնդակը չի դիպել վորևե խաղացողի և դուրս է յելել դաշտից, վիճելի հարվածը կրկնվում է։ Խաղացողներն իրավունք չունեն դիպչելու՝ մինչև նա դետնին չդիպչի։ Վիճելի հարվածը տեղի յե ունենում ամեն անգամ, յերբ խաղն ընդհատվում է վերոհիշյալ ձևով, անկախ խաղն ընդհատելու վայրից։

3. Դ. Այն ժամանակ, յերբ խաղն ընդհատվել է վորևե պատճառով և հնարավոր չի շարունակել ապատուղանքի 11 մետրանոց, անկյունային, սկզբնական կամ դարպասի հարված տալ, այս դեպքում գնդակը խաղի մեջ է բերվում վիճելի հարվածով։

19. ԽԱՂԻՑ ԴՈՒՐՍ

Յուրաքանչյուր խաղացող, յերբ նա գտնվում է հակառակորդի դաշտի կեսում, գնդակի գծից առաջ, ու իր թիմի անդամը հարվածում է, և յերբ հակառակորդի հանդիպագծի միջև յերկու հակառակորդ չկա, այդ խաղացողը համարվում է «խաղից դուրս» և իրավունք չունի գնդակին դիպչելու, հակառակորդին խանգարելու, կամ վորևե կերպ խաղին մասնակցելու։ Կանոնը չի փոխվում, յեթե խաղացողը գտնվում է «խաղից դուրս» ըստ դատավորման, բայց խաղին վոչ մի մասնակցություն ցույց չի տալիս։ Կանոնը խախտվում է այն ժամանակ, յերբ նա մասնակցում է խաղին. խաղացողը չի կարող դուրս լինել անկյունային հարվածի, դարպասից տրվող հարվածի, կողքի գծից ներս նետվելու դեպքերում, յեթե խաղացողը գտնվում է գնդակի գծից յետ կամ նրա հետ մի գծի վրա կամ յեթե գնդակի վերջին հարվածը տվել է հակառակորդը, և խաղա-

ողը գտնվում է դաշտի իր կեսում։ «Խաղից դուրս» կանոնը հաշվվում է բոլոր ազատ տուգանքի 11 մետրանոց հարվածների ժամանակ։

8. Դ. Դատավորն իրավունք չունի սուլելու և խաղը կանգնեցնելու միայն նրա համար, որ խաղացողը գտնվում է խաղից դուրս։ Դատավորը պետք է լավ հեռևի վոչ թե այն դրությանն, երբ խաղացողը գնդակն ընդունում է, այլ այն դրությանն, երբ իր թիմի անդամը գնդակը նրան է տալիս։ Անհրաժեշտ է, որ դատավորը հիշի—երբ գնդակը գտնվում է խաղացողի ձեռքում, իր թիմի բոլոր անդամները կարող են խաղից դուրս լինել, յեթե նրանք գտնվում են գնդակի գծի առջևը, գնդակին հարվածելու ժամանակ, և յերբեք չեն կարող խաղից դուրս լինել, յերբ նրանք գտնվում են գնդակի գծից յետ կամ թե նրա հետ մի գծի վրա։ Ուրեմն՝ 1. խաղացողը միշտ խաղից դուրս կլինի, յեթե նա գտնվում է գծի առջևը, յերբ իր ընկերը գնդակը ներեն է տալիս և իր ու հակառակորդի հանդիպագծի միջև չկա յերկու հակառակորդ, որոնք ավելի մոտ կանգնած լինեն հանդիպագծին քան ինքը։

2. Խաղացողը խաղից դուրս չի հաշվվում, յեթե գնդակը կպել է հակառակորդին կամ նրա խմբի խաղացողին, որը գտնվում է հակառակորդի հանդիպագծին ավելի մոտիկ քան ինքը։ Այն ժամանակ, յերբ խաղացողի դիրքն իր թիմի անդամի հարվածի ժամանակ յեղել է ճիշտ, իսկ հարվածից հետո առաջ է վազել և ընդունել գնդակը՝ առանց յերկու հակառակորդի իրեն առաջն ունենալու, այդ սխալ չի հաշվվում։ Իսկ յեթե խաղացողն իր թիմի անդամի խաղալու ժամանակ յեղել է «խաղից դուրս», բայց խաղին չի մասնակցել ու հետո յետ է վազել, գնդակը վերցնելու ժամանակ իրենց առջև ունեցել է յերկու հակառակորդ՝ ըստ կանոնի նա տվյալ դեպքում խաղից դուրս չի գտնվել, այս դեպքում պետք է սուլել։ Այս կանոնի վրա պետք է լուրջ ուշադրություն դարձնել անկյունային հարվածի ժամանակ. անկյունային հարվածը կատարելիս վոչ մի խաղացող չի հաշվվում խաղից դուրս բայց յեթե գնդակն ընկնում է դարպասից քիչ հեռու և վերջինիս խփել է հարձակվողներից մեկը, դարպասին մոտ կանգնած մի շարք խաղացողներ կարող են գտնվել «խաղից դուրս»։ Յեթե խաղացողը գտնվում է խաղից դուրս, բայց դեպի նրա կողմը շարժվող գնդակը դիպչում է հակառակորդին, դրա համար խաղը չպետք է կանգնեցնել։ Խաղացողը խաղից դուրս է համարվում վոչ միայն այն դեպքում, յերբ նա գնդակով է խաղում, այլ և այն ժամանակ, յերբ առանց գնդակի վորևե կետ խանգարում է հակառակորդին։ Արգելվում է խաղից դուրս գտնվող խաղացողին հրել, խփել և այլն։ Ինքերցիայի պատճառով դաշտի սահմաններից դուրս վազող խաղացողը կարող է գտնվել «խաղից դուրս», յեթե նա վորևե կերպ խանգարում է հակառակորդին, որինակ՝ դարպասի ցանցի մեջ գնացած և այնտեղ մնացած խաղացողը կարող է խանգարել դարպասապետին։ Վոչ մի դեպքում չպետք է սուլել, յեթե խաղացողը գտնվում է խաղից դուրս, բայց վոչ մի մասնակցություն չունի խաղին։

8. Կ. Խաղացողը խաղից դուրս է հաշվվում վոչ թե գնդակն ընդունելու մոմենտին, այլ այն ժամանակ, յերբ գնդակը նրան տալիս է իր թիմի անդամը։ Յեթե հարվածը կատարել է հակառակորդը, խաղացողն

այս դեպքում չի գտնվում «խաղից դուրս», յերբ հարվածը կատարել է նույն խմբի անդամը։ Խաղացողը չի կարող «խաղից դուրս» լինել հետևյալ դեպքերում։

1. Յեթե նա յեղել է գնդակի դծից յետ կամ նրա հետ մի գծի վրա։

2. Յեթե նա յեղել է դաշտի իր կիսում։

3. Յեթե գնդակն ընդունելիս իր առաջ յերկու հակառակորդ կա։

1. Հակառակորդը հարվածել է գնդակին կամ դիպել է նրան.

2. Գնդակը խփել է իր թիմի խաղացողը, վորի հակառակորդի դարպասին ավելի մոտ է գտնվում քան ինքը։

3. Յեթե իր և հակառակորդի հանդիպադծի միջև խաղի շարունակության ընթացքում հակառակորդ յերկու խաղացողներ են կանգնել։

20· ԿՈՊԻՏ ԽԱՂ

Արգելվում է խաղացողին՝ ձեռքով կամ վոտքով խփել։ Արգելվում է խաղացողին՝ վոտը դեմ տալ և հետապնդել հակառակորդին վայր գցելու՝ գործադրելով վոտքերը, ձեռքերը, կռանալով նրա հետևը կամ առաջը։ Արգելվում է խաղացողի վրա թռչել և ընդհանրապես ամպլիսի ձևեր գործածել, վորոնցից խաղացողը ֆիզիկական վնասվածքներ կարող է ստանալ։ Թույլատրվում է խանգարել հակառակորդին, նրա ճանապարհը կտրելով այն ժամանակ, յերբ նա վազում է գնդակը բռնելու. այս դեպքում կարելի յե նրա առջևը յետ ու առաջ վազել՝ փակելով նրա ճանապարհը, սակայն առանց ձեռքերի ոգնության։

3. Դ. Դատավորը պետք է կարուկ միջոցների դիմի՝ կոպիտ խաղին վերջ տալու համար՝ կանգ չառնելով վոչ մի դրության առաջ։ Պետք է հիշել, վոր պատժվում են այն խաղացողները, վորոնք դիտավորյալ կոպտություններ են անում։

3. Կ. Խմբակները պետք է հիշեն, վոր իրենք պատասխանատու յեն իրենց թիմի վողջ կազմի համար, ուստի չպետք է թույլ տալ, վոր կոպիտ խաղացողները խաղին մասնակցեն, վորոնց պատճառով իրենց թիմը կարող է պարտություն կրել։

21· ԽԱՂ ՁԵՌՔԵՐՈՎ

Ձեռքերով խաղալ թույլատրվում է միայն դարպասապահին, յերբը նա գտնվում է իր տույժի հրապարակի սահմաններում. մնացած խաղացողներից վոչ մեկը իրավունք չունի դիտավորյալ կերպով ձեռքերով խաղալու, յերբ գնդակը խաղի մեջ է։

3. Դ. Խաղացողը տուգանվում է, յերբ դիտավորյալ կերպով է ձեռքերով խաղում, իսկ յերբ պատահաբար է գնդակը դիպչում ձեռքին, այդ սխալ չի հաշվվում։

3. Կ. Անհրաժեշտ է հիշել, վոր դատավորը սուլում է, յերբ խաղացողը դիտավորյալ կերպով է ձեռքերով խաղում։ Այդ վորոշելու իրավունքը վերապահվում է դատավորին։

22· ՇՐՋՈՒՄՆԵՐ

Հակառակորդին թույլատրվում է հրել միայն այն դեպքում, յերբը նա անմիջապես մոտիկ է գտնվում գնդակին, հիշելով, վոր հրումները կոպիտ և վտանգա-

վոը չպետք է լինեն. արգելվում է հակառակորդին ձեռքերով հրել և առհասարակ հակառակորդին խանգարել մարմնից հեռացրած ձեռքի վրա մի մասով. արգելվում է հակառակորդին մեջքից հրել, յեթե նա դիտավորյալ կերպով չի խանգարում խաղացողին։ Յեթե խաղացողը յերեսը դարձնում է դեպի իր դարպասը, ի-

№ 5.—Գնդակն ոդի մեջ կանդնեցնելը

մանալով, վոր իրեն վրա հարձակվում են, այդ համարվում է հակառակորդին խանգարել։

8. Դ. Հրել կարելի յե կրծքով և ուսով, և այդ ժամանակ ձեռքը մարմնին սեղմած պետք է լինի։

8. Կ. Պետք է հարձակվել առանց կոպտության և կոպտությունը չպետք է բացատրել ինտերցիայի որենքով։

23. ԴԱՐՊԱՍԱՊԱՀԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Դարպասապահն իր տուգանքի հրապարակի սահմաններում իրավունք ունի ձեռքերով խաղալու, բայց իրավունք չունի գնդակն ոդի մեջ վեր գցելով՝ 4 քայլից ավելի անելու։

8. Դ. Յերբ դարպասապահը կատարում է 5-րդ քայլը, պետք է սուլել։

24. ՀԱՐՁԱԿՈՒՄ ԴԱՐՊԱՍԱՊԱՀԻ ՎՐԱ

Դարպասապահի վրա կարելի յե հարձակվել, յեթե նա դուրս է յեկել իր դարպասի հրապարակի սահմաններից։ Դարպասի հրապարակում դարպասապահի վրա կարելի յե հարձակվել այն ժամանակ, յերբ նա դիպչում է գնդակին կամ դիտավորյալ կերպով խանգարում է հակառակորդի խաղալուն. այս դեպքում հարձակումը կոպիտ չպետք է լինի։

8. Կ. Անհրաժեշտ է, վոր դարպասապահը վորքան կարելի յե շուտ ազատվի գնդակից, վորպեսզի հարձակման չենթարկվի։

25. ԴԱՐՊԱՍԱՊԱՀԻՆ ՓՈԽԱՐԻՆԵԼԸ

Դարպասապահին խաղի ժամանակ կարելի յե փոխարինել մի ուրիշ խաղացողով (նույն թիմի անդամ-

ներից), բայց այդ մասին նախապես պետք է հայտնել դատավորին։ Եթե դարպասապահը փոխվել է առանց դատավորի գիտության և նոր դարպասապահը ձեռքով վերցրել է գնդակը, այդ համարվում է դիտավորյալ կերպով ձեռքով կատարված խաղ։

3. Դ. Դատավորը պետք է հիշի, թե խաղի սկզբում ով է դարպասապահը։

3. Կ. Հիշեցնք, վոր դարպասապահին փոխելու համար դատավորից թույլատվություն պետք է խնդրել։

26. ԱԶԱՏ ՀԱՐՎԱԾ

Կանոնների 15, 16, 17, 18, 19, 23, 26, 27, և 28 կետերը խախտելու դեպքում դատավորը խախտողների հակառակորդ թիմին «ազատ հարված» կատարելու իրավունք է տալիս, և այդ կատարում է հետևյալ ձևով։

Գնդակը դրվում է դաշտի այն կետում, վորտեղ տեղի յե ունեցել կանոնի խախտումը։ Ազատ հարված կատարող թիմի հակառակորդներն իրավունք չունեն մինչև հարվածը կատարելն 9 մետրից ավելի մոտենալ, իսկ յեթե ազատ հարվածը տրվում է հանդիպագծից 9 մետր պակաս հեռավորության վրա, պաշտպանող թիմի անդամները կարող են կանգնել իրենց դիմագծի կամ դարպասի միջին գծի վրա։ Գնդակը խաղի մեջ է հաշվվում, յերբ գլորվում կամ թռչում է 70 սմ։ Հարվածը կատարվում է դատավորի սուլելուց հետո։ Հարվածը կատարող խաղացողն իրավունք չունի կրկին անգամ դիպչելու գնդակին՝ մինչև մի ուրիշ խաղացող նրան չդիպչի։ Հարվածը կարելի յե տալ ցանկացած ուղղությամբ։ Ազատ հարվածից անմիջապես դարպաս

անցած գնդակը չի հաշվվում։ Ազատ հարվածը տրվում է կանոնները խախտելու համար, անկախ տեղից. այդ վորոշում է դատավորը։

3. Դ. Դատավորը կարող է ազատ հարված տալ այն բոլոր դեպքերում, յերբ խաղացողը դատավորի կարծիքով ցանկանում է կոպտություն անել և ընդհանրապես վտանգավոր խաղ է սկսում յերևան բերել, բայց խաղացողի այդ վարմունքը բավական պարզ չե ավելի խիստ միջոցներ ձեռք առնելու համար։ Վտանգավոր խաղի համար նշանակած ազատ հարվածի ժամանակ դատավորը մեղավորին նախորդ զգուշացնում է։ Դատավորը չպետք է ազատ հարված նշանակի, յեթե այդ հարվածն առավելություն է տալիս հակառակորդ թիմին։

3. Կ. Հարվածը կատարվում է դատավորի սուլելուց հետո։

27. ՏՈՒԳԱՆՔԻ ՀԱՐՎԱԾ

Կանոնների 20, 21, 22, և 24 կետերը տուգանքի սեփական հրապարակի սահմաններից դուրս խախտելու դեպքում դատավորը կանոնը խախտողի հակառակորդի ոգտին տալիս է «տուգանքի հարված» այնտեղից, վորտեղ փոխվել է կանոնը։ «Տուգանքի հարված»-ը կատարվում է ճիշտ այն պայմաններում, ինչ կանոնների հարվածը։ «Տուգանքի հարվածից» անմիջապես դարպաս անցած գնդակը հաշվվում է։ «Տուգանքի հարված»-ը նշանակվում է այն ժամանակ, յերբ գնդակը գտնվում է խաղի մեջ և յերբ այդ կանոնների խախտումը տեղի յե ունեցել տուգան-

քի հրապարակի սահմաններից դուրս։ Կանոնների խախտման տեղը ցույց է տալիս դատավորը։

8. Դ. Տուգանքի հարվածով պետք է տուգանել միայն կանոնները դիտավորյալ կերպով խախտողներին։ Դատավորը չպետք է տուգանի, յեթե այդ հարվածից ոգուտ է մեղավոր թիմը։

8. Կ. Հարվածը կատարելու ժամանակ դատավորը սուլում է։

28. ՏԱՍՆՄԵԿ ՄԵՏՐԱՆՈՑ ՀԱՐՎԱԾ

Կանոնների 20, 21, 22, 25 կետերը տուգանքի սեփական հրապարակի սահմաններում խախտելու դեպքում դատավորը կանոնը խախտողի հակառակորդի ոգուտին տալիս է տասնմեկ մետրանոց հարված, վորը կատարվում է այդ հարվածը կատարելու հատուկ հաշվված տեղից հետևյալ ձևով։

Բոլոր խաղացողները, բացի տասնմեկ մետրանոց հարվածը կատարողից և հարվածն ընդունող հակառակորդի դարպասապահից, պետք է տուգանքի հրապարակի սահմաններից դուրս գտնվեն, և դարպասապահը չպետք է դուրս գա դարպասի միջին գծից՝ նախքան հարվածը կատարելը. գնդակը պետք է խփել առաջ, և գնդակը խաղի մեջ է մտնում հարվածից անմիջապես հետո. այս հարվածից հետո անմիջապես դարպաս մտցած գնդակը հաշվվում է։ Հարվածը կատարող խաղացողն իրավունք չունի կրկին դիպչելու գնդակին, մինչև նրան չդիպչի մի ուրիշ խաղացող։ Յեթե խաղի ընթացքում տեղի յե ունեցել վերոհիշյալ կանոնների խախտում, վորի համար պետք է դնել տասնմեկ մետրանոց հարված, սակայն խաղի ժամանակը լրացել է

այս դեպքում հարվածը կատարելու համար պետք է ժամանակը յերկարացնել և անցած-գնացածը հաշվել որինական։ Յեթե հարվածը կատարելու ժամանակ գնդակն անցել է դարպասով, պետք է այդ հաշվի առնել, յեթե նույնիսկ պաշտպանվող թիմը թույլ է տվել կանոնների վորևե խախտում։ Տասնմեկ մետրանոց հարվածն առանց վերոհիշյալ պայմանների կատարելու դեպքում կրկնվում է, բայց կրկնությունը վոչ մի ոգտակար հետևանք չպետք է ունենա տուգանվող թիմի համար։ Տասնմեկ մետրանոց հարվածը կարելի յե նշանակել միայն այն դեպքում, յերբ գնդակը խաղի մեջ է գտնվում։

8. Դ. Յեթե խաղացողը խախտում է կանոնը «խաղից դուրս» գտնվող խաղացողի վերաբերմամբ, տասնմեկ մետրանոց հարվածը պետք է տալ։ Տասնմեկ մետրանոց հարվածը տրվում է կանոնները դիտավորյալ կերպով խախտելու դեպքում. Տասնմեկ մետրանոց հարվածը մեղավորին չի ազատում պատժի այլ ձևերից։ Յեթե տասնմեկ մետրանոց հարվածի ժամանակ կանոնը խախտել է հարվածող թիմը, և գնդակն անցել է դարպասով, հարվածը կրկնվում է, յեթե գնդակը դարպասը չի անցել, հարվածը կատարված է համարում, իսկ յեթե կանոնը խախտել է պաշտպանվող թիմը, և գնդակը դարպասն անցել է, հարվածը կատարված է համարվում. յեթե գնդակը դարպասը չի անցել, հարվածը կրկնվում է։

8. Կ. Տասնմեկ մետրանոց հարվածի տեղն անհրաժեշտ է նշանակել։ Խաղացողները չպետք է անցնեն տուգանքի հրապարակի սահմանները, մինչև հարվածը կատարվի։

29. ԴԱՏԱՎՈՐ

Ցուրաքանչյուր խաղում պետք է լինի դատավոր, վորը հետևում է, վոր կանոնները պահպանվեն և վորոշում է բոլոր վիճելի հարցերը։ Նրա վորոշումները խաղի հետ կապված բոլոր խնդիրների հետ վերջնական են՝ արդյունքի տեսակետից։ Դատավորը հետևում է ժամանակին և խաղի մասին հաշվետվություն է կազմում։ Յեթե խաղացողներից մեկը վոչ ընկերական վերաբերմունք և ցույց տալիս, դատավորը վերջինիս զգուշացնում է, իսկ յերևույթը կրկնվելու կամ խաղացողի կոպիտ վերաբերմունքի ժամանակ դատավորն իրավունք ունի մեղավորին դաշտից հեռացնելու՝ առանց նախազգուշացման, վորի մասին պետք է հայտնի համապատասխան որդանին։ Դատավորը կարող է խաղը դադարեցնել ըստ իր հայեցողության՝ մութն ընկնելու, խաղացողների կոպիտ վերաբերմունքի, հանդիսականների խաղին խառնելու և բոլոր այն դեպքերում, յերբ դատավորը տեսնում է, վոր առողջ ֆիզիկական մրցումը կորցնում է իր նշանակությունը։ Դատավորին իրավունք և վերապահվում խաղը շարունակելու, յեթե խաղը դադարեցված է յեղել դժբախտ պատահարի կամ մի այլ պատճառով։

Այն բոլոր դեպքերում, յերբ խաղն ընդհատված է յեղել կամ խաղացողները վորևե տուգանքի յեն յենթարկվել, դատավորն այդ մասին հայտնում է համապատասխան կազմակերպության, միաժամանակ այդ մասին մուծում է խաղի արձանագրության մեջ։ Դատավորը պետք է հաշվի առնի խաղի այն ժամանակը, վորը կորել է պատահական կերպով կամ դժբախտ

պատահարի պատճառով։ Յեթե խաղի ժամանակ խաղացողներից մեկը ֆլասված է ստանում և չի կարողանում խաղը շարունակել, այս դեպքում խաղը դադարեցվում է, ֆլասվածը դուրս է տարվում հանդիսագծի կամ կողքի գծի հետև, վորից հետո խաղը շարունակվում է։ Դատավորը չի կարող իր վորոշումը փոխել՝ խաղը վերսկսելուց հետո։ Դատավորի վորոշումներին յենթակա յեն նաև կանոնների այն խախտումները, վորոնք տեղի յեն ունեցել ընդմիջումի կամ այն ժամանակ, յերբ գնդակը խաղից դուրս եր գտնվում։

Կանոնների այդպես դիտավորյալ և սիստեմատիկ խախտումը համարվում է վոչ ընկերական վերաբերմունք։ Դատավորը պետք է հետևի, վոր ազատ հարվածը, տուգանքի հարվածները, գնդակը ներս գցելը, անկյունից և դարպասից կատարվող հարվածները, տասնմեկ մետրանոց և սկզբնական հարվածները կատարվեն ըստ կանոնի։ Դատավորի նկատմամբ կատարված հանցագործությունները, վորոնք տեղի յեն ունեցել խաղից դուրս գտնված ժամանակ, հաշվվում են վորպես խաղադաշտում կատարված հանցագործություններ։

Դատավորի հասցեին արտահայտված կոպիտ և անքաղաքավարի արտահայտությունները կոպիտ վարմունք են համարվում այս կամ այն իմաստով։

8. Դ. Խաղի ժամանակ տեղի ունեցած բոլոր թյուրիմացությունները լուծում է դատավորը։ Այս գործում դատավորին ոգնում են գծային դատավորները, վորոնք ամբողջովին յենթարկվում են դատավորին։

Կոպիտ խաղի նկատմամբ դատավորին վերապահվում են բոլոր իրավունքները։ Յեթե դատավորն զգում

է, վոր խաղացողներից մեկը վտանգավոր է խաղի ընթացքի նկատմամբ, նա կարող է խաղը դադարեցնել և ազատ հարված տալ հակառակորդին, միաժամանակ զգուշացնելով հակառակորդին։ Յեթե նույն խաղացողը կրկին անգամ խախտի այս կանոնները, նրան կարելի յե հեռացնել դաշտից։ Նույնը կատարվում է մրցումից դուրս, իսկ խաղացողների՝ հանդիսատեսների կամ դատավորի վերաբերմամբ կոպիտ վերաբերմունք ցույց տալու դեպքում նախազգուշացում չի պահանջվում։ Տուգանքների մասին դատավորը պետք է հայտնի համապատասխան կազմակերպությանը։

Դատավորը պետք է խուսափի հետևյալից.

1. Դաշտում թիմերի անդամների, ներկայացուցիչների և մյուս անձնավորությունների հետ վեճի ու կռվի բռնվելուց։

2. Վերոհիշյալների կամ ժամուլի ներկայացուցիչների հետ դաշտից դուրս վեճի և կռվի բռնվելուց։

3. Այն խաղացողին ձեռք տալուց, վորին նա պատժում է, կամ նրա հասցեին վորևե ծաղրական շարժում անելուց։ Դատավորը մինչև խաղն սկսելը պետք է ստուգի իր ժամացույցը գծային դատավորների ժամացույցների հետ։ Պետք է հաշվի առնել դարպաս անցած գնդակների թիվը և խաղի սկզբնաժամանակը։

8. Կ. Թիմի անդամները, յերբ տեսնում են, վոր հասարակությունն աղմուկ է հանում դատավորի հասցեյին, պետք է միջոցներ ձեռք առնեն պաշտպանելու դատավորին ինչպես խաղի ժամանակ, նույնպես և խաղից դուրս, հիշելով, վոր դատավորի անձեռնամխելիության համար պատասխանատվությունն ընկնում է թիմի վրա։

Ֆուտբոլի թիմերում անհրաժեշտ է լայն մասսայական աշխատանք տանել դատավորի շուրջը հարգանք ստեղծելու գործում, ինչպես խաղի մեջ, նույնպես և խաղից դուրս։ Դատավորի վճռի դեմ կարելի յե բողոքել, յերբ կատարած սխալը կարելի յե հաստատել առանց վկաների. որինակ՝ չի կարելի բողոքել, յերբ դատավորը գնդակը դարպասն անցած է հաշվել և խաղից դուրս վիճակում է յեղել։ Կարելի յե բողոքել, յերբ դատավորն ազատ հարվածից գնդակը դարպասն անցած է հաշվել։ Թիմերը պետք է ունենան ուժեղ ձայն հանող սուլիչ։ Խաղացողներն իրավունք չունեն դաշտում դատավորի հետ խոսելու։ Թիմի ավագը դատավորի հետ կարող է խոսել վորևե խնդրի մասին, նույնպես կարող է հետաքրքրվել դատավորի տված վճռի պատճառներով. միաժամանակ յերբեք վիճաբանության չպետք է բռնվի դատավորի հետ կամ նրա վորոշումների նկատմամբ հավանության կամ անբավականության նշաններ չպետք է արտահայտի։ Խաղացողները պետք է խուսափեն դատավորին վիրավորելուց և միշտ նրան պաշտպանեն։ Թիմի անդամները պետք է խաղը դադարեցնեն միայն դատավորի սուլելուց հետո։ Բոլոր խաղացողները դատավորի կարգադրությունները պետք է կատարեն առանց վորևե առարկության։

30. ԳԾԱՅԻՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐ

Ֆուտբոլ խաղալու ժամանակ պետք է լինի յերկու գծային դատավոր, վորոնք ամբողջովին յենթարկվում են գլխավոր դատավորին և ինքնուրույն վորոշումներ չեն կարող անել. նրանք հետևում են, վոր յերբ գնդ-

գակը խաղից դուրս է գալիս, թիմն այդ գնդակը պետք է ներս գցի, կամ հարված տա անկյունից, և ոգնում են դատավորին խաղը վարելու գործում։ Դատավորն իրավունք ունի դաշտից հեռացնելու գծային դատավորին և նրա փոխարեն ուրիշին նշանակելու, յեթե նա խաղի ընթացքին ավելորդ տեղը միջամտում է ու իրեն անշնորք է պահում. այդ մասին դատավորը պետք է հայտնի համապատասխան կազմակերպության։

Գծային դատավորներն իրավունք ունեն դատավորի ուշադրությունը հրավիրելու կանոնները խախտելու այն դեպքերի վրա, որ դատավորը կարող է չը տեսնել։

8. Դ. Գծային դատավորները պետք է համարձակ կերպով դրոշակը բարձրացներ այն մոմենտին, յերբ գնդակը գծից անցնում է, միաժամանակ ցույց տալով այն տեղը, որտեղից գնդակը պետք է խաղի մեջ նետել, և այն, թե որ թիմը պետք է նետի։ Գծի դատավորները պետք է դատավորի ուշադրությունը հրավիրեն խաղացողների կոպտության և վոչ ընկերական վերաբերմունքի վրա և դատավորին պետք է հայտնեն իրենց կարծիքն այն խնդիրների մասին, որոնք դատավորի համար վիճելի յեն։

8. Կ. Թիմերը պետք է ունենան դրոշակներ՝ գծային դատավորների համար։ Խաղացողների ուշադրությունը պետք է ուղղված լինի դատավորի սուլիչին և վոչ թե գծային դատավորների դրոշակներին, հիշելով, որ դատավորը կարող է այլ որոշում ընդունել, քան այդ առաջարկում է գծի վրայի դատավորը՝ համաձայն իր տեսածի։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГСС. БИБЛИОТЕКА
ՀԱՍՍՌ-ԱԲՄ ՍՍՀ

Յանկ

Ինչպես պետք է սկսել Ֆուտբոլի Ուսուցումը մանկական խմբակներում 5
Ֆկ խմբակներում 10
Խաղի պաշտոնական կանոնները յերեխաների համար 10
1. Դաշտի չափերը 11
2. Դաշտի գծագրումն 13
3. Դարպասներ 13
4. Դարպասապահի հրապարակը 13
5. Տուգանքի հրապարակ 14
6. Գնդակ 14
7. Խաղացողների կոշիկները 15
8. Խաղացողները 16
9. Դարպասների ընտրությունը 16
10. Խաղի տևողությունը 17
11. Հանգիստ ընդմիջում և փոխանակում 17
12. Սկզբնական հարված 19
13. Դարպասի գրավումը 21
14. Գնդակը դուրս է գալիս խաղից 21
15. Գնդակը ներս գցելը 23
16. Հարված դարպասից 23
17. Անկյունային հարված 24
18. Վիճելի հարված 25
19 Խաղից դուրս 28
20. Կոպիտ խաղ 29
21. Խաղ ձեռքերով 29
22. Հրումներ 31
23. Դարպասի իրավունքները 31
24. Հարձակում դարպասապահի վրա 31
25. Դարպասապահին փոխարինելը 32
26. Ազատ հարված 33
27. Տուգանքի հարված 34
28. Տասնմեկ մետրանոց հարված 36
29. Դատավոր 39
30. Գծային դատավորներ 41

ԳԻՆԸ 35 կոպ

587
36
С97

Ш. Мерангулян

ДЕТСКИЙ ФУТБОЛ

Гиз ССР Армении, Эривань, 1935 г.

ՀՀ Ազգային գրադարան
NL0148818

16546